գութեան ուխտս երանաւէտ համբուրիւ ողջունէին զսրբոյ պատրիարգին ոտս, և նորին հրամանաւ ուղարկեալք անտի ոսկեղէն և արծաթեղէն սպասուք և բազում նշխարօք յամենայն սրբութեանցն Աստուծոյ, յարաղուարճ ցնծութեամբ հրաժարեալք քահանայիւք հանդերձ գնային, և եկեալ հասանէին ի սուրբ պահս քառասնորդացն յեօթներրորդ շաբաթու պասեքի Զատկին ի ձորախորխում անտառայր մայրաստանիկ աշխարհն Արցախայ ի գաւառն Մեծ-կուենից, և ի կիրճս ճանապարհին երկաջոկեալ զունդն յերկուս բաժանելով՝ նստէին գուբարս յայնմ տեղւոջ, որում Աստեղն կոչեն բլուր ի հիւսիսոյ կողմանն, իսկ զունդն երկրորդ յայնկոյս Տրդուական գետոյն ի հարաւական կողմանն ի մայրոլորտ հովտին ի պուրակին բնակէր Զղախ անուանելոյ, զի ուխտիւք խոստացեալ էին առ միմեանս կատարել ի տեղւոջն զամենասուրբ Զատիկն»։

Իսկ Թարգմանչի բերած Խաչի գտնուելու համար նոյն Պատմագիրը այսպէս ասէ (Հատ. բ. գլ. լգ յեր. 171—175)։

«Արդ յետ անցանելոյ ամ մի ի վերայ այնորիկ, սակս նախագուշակ հրամանին որ ի վերուստ եղև նմա զազդումն, ցանկութիւն յոյժ ունէր սուրբ երէցն (Իսրայէլ,) խնդրել զփափագելի Խաչն՝ զծածկեալն սրբոյն Մաշտոցի ի Գիս անուանեալ գիւղն, որ յՈւտի գաւառի։ Եւ վասն զի ինքն առաջին ի բարի եղբարց զսիրոյն ունէր զպատուիրան խորհելով առ ամենեսեան և զդեցեալ զճշմարտութիւն Աստուծոյ ի ծածուկ, վասն այն բարեխնամաբար հոգացեալ զբոլորիցն օգուտ ոչ հոչակէր զծածուկ խորհուրդն ի հանդէս ամբոխից և խուսափել ջանայր ի մարդկան գովեստից՝ փախչելով ի փառամոլ և ի սնապարծիկ ախտից, վասն այնորիկ զմի ոմն ի սրբասնելոցն քահանայից ի նախամեծար պատուաւորաց հետեող իւրումն գիւտին առնէ, և ոչ ժողովով կամէր զերթն, այլ նոքաւ հանդերձ հասանէր ի նախասացեալ վայրսն՝ ի հին եկեղեցին։ Եւ ոչ գիտելով ստուգել և նշմարել զտեղին՝ նոյն ժամայն նշան զարմանալի լինէր ի վերայ սաղարթապատ ծառոցն նոճից, որք երկաքանչիւր աստի և անտի միջաւորեալ ունէին յինքեան զկոչարանն սուրբ, յոր իբր թէ ծագումն ինչ լուսոյ երևեալ բոցաճաճանչ կամա-